ՆԱԽԱԳԻԾ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-293³-24.09.2019-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 8.1-ին կետով.

«8.1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ ընդունում է տեղական հանրաքվեի նախապատրաստման և անցկացման ծախսերի ֆինանսավորման մասին որոշում.»

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածի 14-րդ մասը լրացնել նոր 12.2-րդ կետով.

«12.2) ավագանու հաստատմանն է ներկայացնում տեղական հանրաքվեի նախապատրաստման և անցկացման ծախսերի ֆինանսավորման մասին որոշման նախագիծ.»:

Հոդված 3. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում « քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների» բառերից հետո լրացնել «, կառավարության կողմից վարչատարածքային բաժանման ծրագրվող փոփոխությունների վերաբերյալ » բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:

ՏԵՂԵԿԱՆՔ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պ-293³-24.09.2019-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 3. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում « քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների» բառերից հետո լրացնել «, կառավարության կողմից վարչատարածքային բաժանման ծրագրվող փոփոխությունների վերաբերյալ » բառերը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Տեղական հանրաքվեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (Պ-293-24.09.2019-ՊԻ-011/1) եւ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» (Պ-293³-24.09.2019-ՊԻ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
3.	Վարազդատ Կարապետյան	«Տեղական հանրաքվեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ (Պ-293-24.09.2019-ՊԻ-011/1)	**1.** Նախագծի 6-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. « **Հոդված 6.** Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը «քառորդը» բառից հետո լրացնել «, իսկ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հարցով անցկացրած տեղական հանրաքվեի դեպքում՝ ոչ պակաս, քան տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց 50 տոկոսը» բառերը:»	Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է

4.	Վարազդատ Կարապետյան	**«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (Պ-293³-24.09.2019-ՊԻ-011/1**)	**Նախագիծը լրացնել նոր 3-րդ հոդվածով. Հոդված 3.** Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում « քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների » բառերից հետո լրացնել «, կառավարության կողմից վարչատարածքային բաժանման ծրագրվող փոփոխությունների վերաբերյալ » բառերը:	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է